

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում ըստ բաղադրիչների կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ`

ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն աշխատանքներ են իրականացվել լրացուցիչ ևս 26 համայնքում,

- 1) 2 համայնքում իրականացվել են ջրարբիացման համակարգի շինարարական աշխատանքներ (կառուցվել է 11.1 կմ ջրագիծ, տեղակայվել է 5 հատ խմոց),
- 2) 12 համայնքների կոոպերատիվներին տրամադրվել է 28 միավոր գյուղտեխնիկա, որից 4 միավոր տրակտոր և 24 միավոր այլ գյուղգործիքներ,
- 3) 24 համայնքի դեգրադացված արոտներում իրականացվել են ցուցադրական տարածք-ների բարելավման աշխատանքներ,
- 4) իրականացվել է 55 համայնքի վերականգնված գյուղամերձ դեգրադացված արոտների տարածքների վերջնական գնահատում,
- 5) իրականացվել է 63 համայնքի արոտավայրերում բուսականության և բնապահպանության ցուցանիշների փոփոխության վերաբերյալ ազդեցության ուսումնասիրություն:

Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում`

ա) «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչ

Ուսուցողական դասընթացների կազմակերպում

ՀՀ 10 մարզի Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով ծրագրի շրջանակներում Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից կազմակերպել են ուսուցողական դասընթացներ: Դասընթացներին մասնակցել են 233 մասնագետ և ֆերմեր, որոնցից 49-ը` կին:

բ) «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչ

Անասնաբուժական սպասարկման կենտրոններ

ՀՀ Տավուշի մարզի Բերդ, ՀՀ Շիրակի մարզի Փանիկ համայնքներում ավարտվել են անասնաբուժական սպասարկման կենտրոնի շինարարական աշխատանքները: Կենտրոնները համալրվել են անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և հատուկ ավտոմեքենաներով: Իրականացվել է Ծրագրով կառուցված առաջին երեք անասնաբուժական սպասարկման կենտրոնների գործունեության գնահատում: Արդեն իսկ գործող 3 կենտրոնների հետազոտության արդյունքները վկայում են, որ 2016

թվականի առաջին կիսամյակի ընթացքում կենտրոնների շրջանառությունը վաճառված ապրանքներից ու մատուցված ծառայություններից կազմել է շուրջ 30 մլն ՀՀ դրամ, իսկ այցելուների թիվը՝ 6900 մարդ 71 համայնքից:

Մրցակցային դրամաշնորհների ծրագիր

Ծրագրի շրջանակներում իրականացվել է 7 փուլից բաղկացած մրցույթ, որոնց արդյունքում հաղթող են ճանաչվել 69 ծրագիր: Բոլոր 69 ծրագրերը ավարտված են և գնահատված են անկախ գնահատողի կողմից:

Իրականացվող 69 դրամաշնորհային ծրագրերի ուղղակի շահառուների թիվը կազմել է 336, իսկ անուղղակի շահառուների թիվը՝ 33.5 հազ.: Յուրաքանչյուր իրականացվող ծրագրի ուղղակի շահառուների միջին թիվը կազմել է շուրջ 5 մարդ, իսկ անուղղակի շահառուների միջին թիվը՝ 480: Ավարտված ծրագրերի իրականացման շնորհիվ մեկ ծրագրի հաշվով միջինը ստեղծվել է 6-7 աշխատատեղ: Իրականացված ծրագրերի շնորհիվ գործող ֆերմերների և ֆերմերային տնտեսությունների եկամուտներն ավելացել են 25-55%-ով:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում ըստ բաղադրիչների կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ

- 1) ՀՀ 8 մարզի (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ) 100 համայնքի փոխարեն ընդգրկվել է 113 համայնք,
- 2) 38 համայնքում հիմնադրվել և իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել են «Արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ,
- 3) 48 համայնքի արոտագտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 300 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 47 անիվավոր տրակտոր և 253 միավոր այլ գյուղգործիքներ,
- 4) 32 համայնքում ավարտվել են արոտների ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (կառուցվել է 94 կմ ջրագիծ, տեղադրվել է 91 հատ խմոց, ջրարբիացվել է շուրջ 46 հազ. հա արոտ),
- 5) 8 համայնքում շարունակվում են ջրարբիացման համակարգի շինարարական աշխատանքներ (44.7 կմ ջրագիծ, 21 հատ խմոց),
- 6) 2 մարզի (Տավուշ և Գեղարքունիք) 20 համայնքի ղեկավարների, արոտագտագործողների կոոպերատիվների նախագահների, հաշվապահների, վեճերը լուծող անձանց, կոոպերատիվների անդամների, կոոպերատիվների խորհուրդների անդամների, համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման կոմիտեների անդամների համար (տարբեր սոցիալական, տարիքային և գենդերային խմբերի շուրջ 2800 կոոպերատիվների անդամների, որից շուրջ 400 կանայք) իրականացվել է ուսուցում՝ կապված արոտագտագործման, կոոպերատիվի

բյուջեի կազմման, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների մանրամասն ներկայացման, Ծրագրի սոցիալական երաշխիքների, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման, դեգրադացիայի դեմ պայքարի, արոտների բարելավման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ներկայացման և այլ թեմաներով,

7) 4 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ և Կոտայք) 18 համայնքի ղեկավարների, արոտագտագործողների կոոպերատիվների նախագահների, հաշվապահների, վեճերը լուծող անձանց, կոոպերատիվների անդամների, կոոպերատիվների խորհուրդների անդամների, համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման կոմիտեների անդամների համար (տարբեր սոցիալական, տարիքային և գենդերային խմբերի շուրջ 2100 կոոպերատիվների անդամների, որից՝ շուրջ 680 կանայք) ուսուցումը շարունակվում է:

Արժեշղթայի զարգացում

Բաղադրիչով հայտարարված 1-ին փուլի մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել 14 ենթածրագիր: Ենթածրագրերի իրականացման ընթացքում 1 ենթածրագիր փակվել է ներդրումներ չիրականացնելու պատճառով, մնացած 13-ը գտնվում են իրականացման տարբեր փուլերում: Երկրորդ փուլի մրցույթի արդյունքում ներկայացված 30 հայտդիմումներից հաղթող է ճանաչվել 16 ենթածրագիր: Հաղթող ճանաչված 16 ենթածրագրերի ղեկավարների հետ կազմակերպվել է հանդիպում՝ պայմանագրերի, գնումների ընթացակարգերի և ֆինանսական այլ հարցերի պարզաբանումների վերաբերյալ, ինչի արդյունքում պատրաստվել են նշված ենթածրագրերի պայմանագրերը և հավելվածները: Հաղթող ճանաչված 16 ենթածրագրերից 15-ի ղեկավարների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր (1 ենթածրագրի ղեկավար հրաժարվել է պայմանագիր կնքելուց): Ներկայումս հաղթող ճանաչված 15 ենթածրագրերը գտնվում են իրականացման տարբեր փուլերում: Համաձայն գործող ընթացակարգի՝ շահառուների կողմից իրականացվում են սարքավորումների ձեռքբերման համապատասխան մրցույթներ, իրականացվում են նաև առաջին փուլի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ենթածրագրերի սննդամթերքի անվտանգության վերաբերյալ գործառույթները, ինչպես նաև մոնիթորինգի աշխատանքները:

Պետական կառույցների կարողությունների հզորացում

- Անասնաբուժական սպասարկման կենտրոններ

ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում իրականացվում են անասնաբուժական սպասարկման կենտրոնի շինարարական աշխատանքները, իսկ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի համար

իրականացվել են հողատարածքի նկատմամբ սեփականության փոխանցման աշխատանքներ:

ՀՀ Շիրակի մարզի Փանիկ համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի համար գնվել է 1 շարժական անասնաբուժական ավտոմեքենա:

- Սննդամթերքի անվտանգություն

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սննդամթերքի անվտանգության տեսուչների համար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ: Ծրագրի շրջանակներում ուսուցանված տեսուչների համար նախատեսվում է ձեռք բերել չափիչ սարքավորումներ, ծառայության կարիքների համար գնվել են սերվերային սարքավորումներ՝ ԼԱՄԲՐՈՆ էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի աշխատանքը ապահովելու համար:

- Անասնաբույժների մոբիլիզացում

Անասնաբույժների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվում են ՀՀ Կոտայքի և ՀՀ Վայոց ձորի մարզերում և ներառում են 20 անասնաբույժի (յուրաքանչյուր մարզից 10 անասնաբույժ) ուսուցում և տեխնիկական աջակցություն 18 ամիսների ընթացքում: Իրականացվել է տվյալ մարզերի անասնաբուժական ծառայությունների ներկա իրավիճակի գնահատում: Իրականացվել է անասնաբույժների ընտրություն, և սկսվել են վերապատրաստման դասընթացները: Վերապատրաստված անասնաբույժների համար նախատեսվում է ձեռք բերել անասնաբուժական և արհեստական սերմնավորման գործիքներ:

- Ինստիտուցիոնալ զարգացում

Հանրապետության ֆերմերային տնտեսությունների շրջանում տեղական բարձրորակ սերմերի ու սածիլների պահանջարկը ապահովելու նպատակով վերանորոգվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 3000մ² մակերեսով ապակեպատ ջերմատունը, ֆիտոպաթոլոգիայի լաբորատորիայի մասնաշենքն ու կաթսայատունը: 3000մ² մակերեսով այլ ապակեպատ ջերմատան վերանորոգման աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ: Գիտական կենտրոնի ջերմատան համար ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ՝ թվով 137 միավոր: